


ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԶԱՏ ԵՒ ԱՆԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼՈՒԱՎԱՐՈՒԹԵԱՆ



1919 Մարտին, Թիֆլիսի մէջ տօնուեցաւ Յովհաննէս Թումանեանի ծննդեան յիսնամեակը: Այդ առթիւ շնորհաւորական հեռագիր մը յղած էր Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: Ահաւասիկ քանաստեղծին պատասխան հեռագիրը.

Մարտ 8, Երեւան

Հայաստանի կառավարութեան

Նախագահի փոխանորդ.

Ա. Խատիսեանին

Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուէք:

Էս բոլոր զգացումները ես բացատրում եմ ոչ թէ իմ գրական գործերի արժէքով, այլ մեր ազղային ոգու անպարտելի հզօրութեամբ, որին չեն կարող ընկճել ոչ սով, ոչ հիւանդութիւն, ոչ հալածանք, ոչ տառապանք: Միշտ մնում է կենդանի եւ թելաւորուած մեծութեան ու գեղեցկութեան տենչերով:

Էս անդամ էլ, առասպելական Ֆէնիքսի նման, պիտի յառնի իր օջախների մոխիրներից նոր կեանքով ու աւելի տաղանդաւոր բանաստեղծների զուարթ երգերով: Եւ եթէ բանաստեղծի աղօթք էք ուղում ինձանից, ապա ես միայն մի աղօթք ունեմ նրա համար, որ նա, հայ ժողովուրդը կենդանի մնայ Ֆիզիքապէս, մնացածը ձեռք կը բերի ինքը — ինքը, որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրաւանդակին, երկնից էնքան մօտիկ, իր խոհուն ճակատը դէմ տուած աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դէպի իր մեծ եւ լուսաւոր ապագան:

Իմ հոգին լիքն է նրա ոգու հզօրութեան շնչով եւ նրա մեծ ապագայի անսասան հաւատով:

Եւ թող էդ մեծ ոգին ու էդ անսասան հաւատը զօրավիգ լինեն նրա կառավարութեանը, որ կարողանայ ժողովրդին հանել էս ծանր ճգնաժամից եւ տանել յաղթանակներից ամենամեծն ու ամենագեղեցիկը — եղբայրական սիրով տիրել հարեւան ժողովուրդների սրտերին՝ Հայաստանի երջանկութեան համար:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ